# Հուսիկ Արա

## Քեզ սիրում եմ

Քեզ սիրում եմ առավոտյան՝
թռչունների արթնանալու հետ.
նրանք լուռ են, ես եմ երգում:
Քեզ սիրում եմ կեսօրին,
երբ ծաղիկն է բացում թերթերը մինչև վերջ,
և բուրում եմ իր փոխարեն:
Քեզ սիրում եմ երեկոյան,
որովհետև օրը չի ուզում ավարտվել.
երկարում է քո ստվերը՝ իմ մարմինն եմ մոռանում:
Իսկ գիշերը խաղաղվում է քո մոտիկը շնչելով.
ես չեմ քնում,
որպեսզի հաջորդ օրը նորից նույնը սիրեմ քեզ:

Առավոտի թռչուն՝ իմ երգ,
կեսօրի ծաղիկ՝ իմ բույր,
և երեկո՝ չավարտվող օր.
դո՛ւ ես պարտադրել:

Քեզ սիրում եմ, որովհետև ուրիշ մեկը
այդքան մանրակետ չի կարող քեզ սիրել: